ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՊԱՐՈՆ Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան.

Ի պատասխան Ձեր 17.12.2018թ. 01/22Մ գրության՝ տեղեկացվում է.

Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի ապրիլի 30-ի «Երևան համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները սահմանելու մասին» N319-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահները կարող են գտնվել ուսումնական, կրթական, մշակութային, առողջապահական, մարզական և սոցիալական կազմակերպություններից, հիմնարկներից, հաստատություններից, հյուրանոցներից, բազմաբնակարան շենքերից, պետական և միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների վարչական շենքերից, զբոսայգիներից, այգիներից, պուրակներից, հանգստի կամ ժամանցի համար նախատեսված այլ վայրերից, հանրային սննդի օբյեկտներից նվազագույնը 100 մետր, իսկ անհատական բնակելի տներից՝ նվազագույնը 70 մետր հեռավորության վրա, բացառությամբ՝ եթե դրանք գտնվելու են.

ա)հիվանդանոցներում գործող ախտաբանաանտոմիական բաժիններում կամ բաժանմունքներում, կամ

բ) գերեզմանատներին (բացառությամբ՝ Եռաբլուրի, Կոմիտասի անվան պանթեոնի) կից գերեզմանատների զբաղեցրած հողամասի սահմանից մինչև 50 մետր հեռավորության վրա:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ «Զոլեր» սգո ծառայությունների համալիրի հողամասի և «Շահումյան 1» գերեզմանատան հողամասի միջև հեռավորությունը կազմում է մոտ 40 մետր, ուստի՝ այս դեպքում հեռավորության սահմանափակման պահանջը չի գործում: Սիլիկյան հին խճուղու ճանապարհահատվածում գործող սգո սրահները վերը նշված ավագանու որոշման պահանջներին համապատասխան ունեն ավտոկայանատեղիներ:

Ինչ վերաբերում է փողոցի ծանրաբեռնվածությանը, տեղեկացվում է, որ այն հանդիսանում է «Շահումյան 1» և «Շահումյան 2» գերեզմանատներ տանող ճանապարհը, որը օրվա երկրորդ կեսից հետո գերծանրաբեռնվում է, ինչպես նաև երթևեկությանը կարող է խոչընդոտ հանդիսանալ նաև նոր ճանապարհի շինարարական աշխատանքների իրականացումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ